ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 24 >> սեպտեմբեր 2019թ.
ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

N 99

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 222-րդ հոդվածներով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասիվ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և հիմք ընդունելով Ա. Մարգարյանի կողմից 23.09.2019թ. ներկայացված բացատրությունը (մուտքի համար՝ 5712)՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Մարգարյանի նկատմամբ կիրառել <<խիստ նկատողություն>> կարգապահական տույժը:
2. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում Ա. Մարգարյանին առձեռն հանձնելու օրվան հաջորդող օրը:

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ